«ՀՈՎՍԵՓԻՄԻՀ» ՆՄԵՆՍՈՒՄՆ ԻՂՌՈՋՕ

ԴԻՄԴԻՄԱՑՈՒՄԸ ԵՂԻՇԵ ԴՈՒՍՈՅԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԻՇԻՆԵՎ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕԾՈՒՄ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Նոյեմբերի 23-ին Մայր Տաճարի օծման 1700-ամյա հոբելյանի շրջանակներում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, Ուխտի Ս. Պատարագ մատուցեց Տ. Դավիթ արքեպս. Սահակյանը: Հընթացս սրբազան արարողության ձեռամբ պատարագիչ Սրբազան Հոր քահանայական ձեռնադրություն և օծում ստացան հինգ սարկավագներ:

Դեռ նախորդ օրը, երեկոյան ժամերգությունից հետո, Մայրավանքում կատարվեց նորընծաների հավատո քննություն: Սարկավագների քահանայության կոչման արարողության ընթացքում խարտավիլակ Հոգեշնորհ Տ. Արտակ վրդ. Տիգրանյանը վկայեց նորընծաների հոգևոր-իմացական պատրաստվածության և արժանիքների մասին, իսկ ընծայացուները միաբերան մերժեցին և նզովեցին հերետիկոսներին ու հերձվածողներին՝ ուխտելով հետևել սուրբ առաքյալների և հայոց երանաշնորհ Հայրապետների լույս հավատքին:

Կիրակի, հընթացս Ս. Պատարագի, ուխտյալները սաղմոսների փոխասացության ներքո ծնկաչոք բարձրացան Ավագ Ս. Խորան: Դառնալով դեպի հավատացյալ ժողովուրդը՝ ընծայացուները բարձրացրին իրենց ձեռքերը՝ ի նշան աշխարհիկ կյանքից հրաժարման: Մեծ հանդիսավորությամբ Ս. Խորան բերվեց Սրբալույս Մյուռոնը, և ձեռնադրող Սրբազան Հայրը մեկ առ մեկ օծեց ընծայացուների ճակատները, աջ և ձախ ձեռքերի ափերը՝ նոր անուններով կոչելով նրանց. Հովիկ սրկ. Հովհաննիսյանը վերակոչվեց Տ. Հայրիկ քահանա, Հակոբ սրկ. Հակոբյանը՝ Տ. Հակոբ քահանա, Արթուր սրկ. Պետրոսյանը՝ Տ. Տիրան քահանա, Արթուր սրկ. Հակոբյանը՝ Տ. Հովնան քահանա, Աշոտ սրկ. Վարդանյանը՝ Տ. Կյուրեղ քահանա: Դավիթ Սրբազանը նորաօծ քահանաներին փոխանցեց նաև Հաղորդության սկիհը՝ տալով նրանց պատարագելու և Տիրոջ մարմինն ու արյունը ժողովրդին բաշխելու իշխանությունը:

Ձեռնադրությունից հետո Ավագ Խորան բարձրացան Վեհափառ Հայրապետը, Գերաշնորհ Սրբազան Հայրերն ու միաբանները և, համբուրելով քահանաների Սրբալույս Մյուռոնով օծված ճակատներն ու ձեռքերը, շնորհավորեցին նրանց:

Նույն օրը, երեկոյան ժամերգության ընթացքում, կատարվեց նորաօծ չորս քահանաների՝ Տ. Հայրիկի, Տ. Տիրանի, Տ. Հովնանի և Տ. Կյուրեղի վեղարի փվչության և աբեղայի օրհնության կարգը: Մայրավանքի միաբանության շարքերը համալրվեցին ևս չորս կուսակրոն քահանաներով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ